

**ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՏԵՂԵԿԱՆՔԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Տեղեկանքը հարկավոր է սկսել «Անվանում» դաշտում լրացնելով Ձեր կազմակերպության ամբողջական անվանումը:

Տեղեկաքն իր մեջ ներառում է ՀՀ գրանցված դեղերի ռեեստրը: Այն Ձեր կողմից լրացվում է ընտրման սկզբունքով: Նշանակում է, որ «Առևտրային անվանում, Միջազգային անվանում, Դեղաձև, Դեղաչափ, Արտադրող» հանրագումարային դաշտերը լրացնելու համար հարկավոր է օգտվել 6-րդ դաշտի ստորին աջ անկյունում գտնվող սլաքից: Կբացվի դեղերի ցանկն ամբողջությամբ. այդ ցանկից ընտրում եք Ձեր կողմից ձեռք բերված դեղը: Հարկավոր է ուշադրություն դարձնել, որ Ձեր կողմից մուտագրվող դեղի տվյալները և ընտրված դեղի բոլոր դաշտերը և տվյալները համապատասխանեն, քանի որ անգամ մեկ ցուցանիշի կամ տառի տարբերությունը կարող է հանգեցնել սխալ արդյունքի:

«Չափման միավոր» դաշտը կրկին ընտրման սկզբունքով է գործում: Այստեղից պետք է ընտրել հատ/տուփ տարբերակները: «Հատ» տարբերակի դեպքում խոսքը գնում է 1 բլիստերի կամ 1 սրվակի մասին, իսկ «Տուփ» տարբերակի դեպքում՝ ամբողջական տուփի: Հարկ է ուշադրություն դարձնել այդ հանգամանքին, քանի որ սխալը կարող է հանգեցնել քանակային և գնային անհամապատասխանության:

«Քանակ» դաշտը լրացվում է Ձեր կողմից, դաշտում թույլատրելի է գրել միայն թվեր:

«Գին» դաշտը լրացվում է Ձեր կողմից, այստեղ ևս թույլատրելի է միայն թվերգրել: Դաշտում գրված գինը պետք է համապատասխանի Ձեր կողմից ընտրված «Չափման միավորը» դաշտից ընտրված տարբերակի գինին: Եթե տարվա ընթացքում եղել են նույն դեղի տարբեր գներով գնումներ, ապա հարկավոր է լրացնել բոլորն առանձին տողերով:

«Գումար» դաշտը կլրացվի ավտոմատ կերպով:

«Մատակարար կազմակերպությունը» դաշտը լրացվում է Ձեր կողմից:

Լրացուցիչ տեղեկությունների առկայության դեպքում անհրաժեշտ է նշել «Այլ նշումներ» դաշտում:

Եթե լինեն գնված կամ որպես օգնություն ստացված դեղեր, որոնք կբացակայեն դեղերի՝ մեր կողմից ներկայացված ցանկից, ապա դրանցվերաբերյալ տեղեկատվությունը լրացնում եք բացելով առանձին էջ, բայց պահպանելով աղյուսակի բոլոր սյունյակների հերթականությունը:

Սույն տեղեկանքի օրինակելի ձևը փոփոխման ենթակա չէ:

Հարցերի առկայության դեպքում կարող եք զանգահարել կամ գրել՝

Առողջապահության նախարարություն՝ հեռ. + 374 10 52 27 21

e-mail: [medicines@moh.am](mailto:medicines@moh.am)

Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝

հեռ. + 374 10 23 47 32 (120)

e-mail: [yeranuhi@pharm.am](mailto:yeranuhi@pharm.am)